

ՄՇԱԿ

Տարեկան գինը 10 ռուբլի է, կես տարվանը 6 ռուբլի:
Առանձին համարները 7 կոպեկով:

Թիֆլիսում զրկում են միմիայն խմորագրության մէջ:
Մեր հասցեն. Тифлисъ. Редакция «Мшакъ».
կամ Tiflis. Rédaction «Mschak».

Խմորագրութիւնը բաց է առաւօտեան 10—2 ժամ
(Բացի կիրակի և տոն օրերից):

Յայտարարութիւնը ընդունուում է ամեն լեզուով:
Յայտարարութիւնները համար վճարում են
իրաքանչիւր բառին 2 կոպեկ:

„ՄՇԱԿ“ ԴՐԱՎԱՆԵՐՆԵՐ ԵՒ ԲՍՎԱՔԱՆԸ ԼՐԱԴԻՐ

Ներկայ 1887 թիւն

Հրատարակում է Թիֆլիսում, նոյն զրկում և նոյն պրոգրամայով: Մերը ստանում ենք սեփական
Հետադարձութիւն:
«ՄՇԱԿ» տարեկան գինը 10 ռուբլի է, կես տարվանը 6 ռուբլի:
Գրվել «ՄՇԱԿ» կարելի է ԽՄԲԱԳՐԱՍԱՆԸ (Բարձրակարգ և Բարձրագոյն փողոցների ան-
կիւնում, Թամարաշվիլի տանը):
Կայսերութեան ուրիշ քաղաքներից «ՄՇԱԿ» գրվելու համար պէտք է դիմել հետևեալ հաս-
ցեով. ТИФЛИСЪ, Редакция газетъ «МШАКЪ», իսկ արտասահմանից. Tiflis, Rédaction du jour-
nal arménien «MSCHAK».

Խմորագրութիւնը հրատարակող ԳՐԻԳՐ ԲՐԻԳՐԻՆԻ

ԲՈՎԱՆԴԱՎՈՒԹԻՒՆ

Ամեն բան նիսիւ.—Ներքին ՏԵՍՈՒԹԻՒՆ.
Ռուսաց թատրոն. Նամակ Մեծ-Վարդապետայից.
Նամակ Բաղրուց. Ներքին լուրեր.—ԱՐՏԱՔԻՆ
ՏԵՍՈՒԹԻՒՆ. Պանդուխտութեան հարցը Հայաստա-
նում. Նամակ Թիֆլիսայից. Արաքսի լուրեր.—
ԽԱՌՆ ԼՈՒՐԵՐ.—Հետ-ԱԳՐԱՆԵՐ.—ՅԱՅՏԱՐԱՐՈՒ-
ԹԻՒՆՆԵՐ.

ԱՄԵՆ ԲԱՆ ՆԻՍԻԱ

Ընթերցողի ուշադրութիւնն ենք դարձ-
նում «Մշակ» ներկայ համարի մէջ տըպ-
ւած վաղարշապատից ստացած լուրի վը-
րա:

Հայի մէջ ամեն տեսակ զգացմունքները
ն ի ս ի ա են: Լսեցէք մեր խնայողական-
յին խօսելիս. «Ռուսաւորչականութիւնն է
մեզ պահպանողը, պէտք է ջանքսկսել,
խաղաղ ոչնչացնելը բողոքականութիւնը»
բացականչում են մեր խնայողական-
յի պատկանողները: Բայց նոյն լուսաւորչակա-
նութեան կենտրոնը, հայոց եկեղեցու կեն-
տրոնական սրբավայրը Եւֆրատինը, այդ մեծ
մեծ խոսողները թողնում են անկում դը-
րութեան մէջ:

Երկուսից մէկը՝ կամ մեծ մեծ մի՛ խօ-
սէք, կամ եթէ խօսում էք,—գործ էլ կա-
տարեցէք: Թող ձեր գործը խօսքի հետ դո-
ւնէ մի անգամ համաձայն լինի...

Ամբողջ ազգի հոգեւոր կենտրոնը, ազգի
հոգեւոր զոյգութեան պահպանողը Եւֆրատ-
ինն է:—Բայց նոյն Եւֆրատինը ողորմելի
զրուրթեան մէջ է՝ քանդվում, աւերվում է:
Ամբողջ Եւֆրատինը, հայոց ազգի այդ սրը-
բավայր կենտրոնը, ինչպէս վկայում են
տեսողները, ուրիշ բան չէ, եթէ ոչ վրա-
տակների մի կոյտ:

Նոյն մեր խնայողականի մեծ մեծ խօ-
սողները, որոնք դուրս իրանց մայրենի լե-
զուից էլ մի խօսք չը գիտեն և իրանց ե-
րեքներին արգելում էլ են հայերէն խօ-
սելու,—հիանում, վերջում են, երբ աշխար-
հագրական ընկերութեան մէջ մի գեղու-
ցանոց աւելի մեծ նշանակութիւն է տալիս
լուսաւորչականութեանը և ցոյց է տալիս
հայերի մէջ բողոքականութեան ու կաթո-
լիկութեան պրոպագանդայի ոչնչութիւնը:

Բայց ասեցէք նոյն մեծ մեծ խօսողներին
որ ձեր եկեղեցու պահպանողը, ձեր եկեղե-
ցու սրբավայրը՝ ինքն իրան պահպանող չէ
կարող, քանի որ մի, փրատակների տակ է
ընկած,—այլապէս անմիջապէս կերկայ այդ
խօսողների ն ի ս ի ա զգացմունքների արժե-
քը... Նրանք իսկոյն կը փախչեն, կը թա-
ղնվեն, որովհետեւ կը վախենան թէ իրան-
ցից մեծ փող կը պահանջվի փրատակների
տակ ընկած լուսաւորչական եկեղեցու սր-
բավայրը վերաշինելու համար:

«Պահանջեցէք մեզանից ամեն տեսակ
զգացմունքների ն ի ս ի ա արտայայտու-
թիւնը, բայց, ի սէր Աստուծու, մի՛ պա-
հանջէք մեզանից այդ նոյն զգացմունքների

գործարարութիւնը»,—ասա մեծ մեծ խօսող
հայ խնայողականի նշանաբանը:

Գ. Ա.

ՆԵՐՔԻՆ ՏԵՍՈՒԹԻՒՆ

ՌՈՒՍԱՅ ԹԱՏՐՈՆ

Երեքշաբթի օր, մայիսի 19-ին, Թիֆլիսի թատ-
րոնում, ռուսաց խումբը տ. Սալինայի մանակ-
ցութեամբ խաղաց Օտորվոկու և Սոլովիլով (Բե-
լուգինի հարսանիք) կոմիդիան: Կոմիդիան զրկած
է վաղուց, նրա մէջ շատ բաներ այժմ անախտ-
նիղմներ են կազմում, այնու ամենայնիւ նրա մէջ
արտայայտված դադարաւոր այնքան համակրելի է,
գործող անձինքը այնպէս կենդանի են նկարագրած,
որ առանց ձանձրանալու կարելի է մեծ հետա-
քրքրութեամբ տեսնել այդ կոմիդիան և այժմ Ազ-
նուական, կրթված, աշխարհային կեանքին սովոր
օրիորդ լինող կարմիր առնամանում է հարուստ
վաճառականի որդի Անդրէյ Բելուգինի հետ: Բե-
լուգինը բոլորովին ուրիշ տեսակ է մեծացած, նա
ոչ կրթված ունի, ոչ արտաքին փայլ, բայց
նա ազնիւ սիրտ ունի և Եւրեյայի համար պատ-
րաստ է ամեն զոհողութիւններ անել: Եւրեյան ա-
մուսնանում է չը սիրելով Անդրէյին, միայն նրա
միջոցներով համար. փոքր դեր չէ կատարում
այստեղ ոմն Ալեքսին, ժամանակակից Միֆիտո-
ֆէլ, որ անբարոյականացում է Եւրեյայի միջոցը,
բարոյեւում նրան, որ նա խղճի դէմ յանցանք
գործած չի լինի, պատկերվում Բելուգինի հետ, որ
յետոյ կարելի լինի Անդրէյի հարստութեան օգ-
նութեամբ լաւ կեանք վարել սիրելիների հետ, այ-
սինքն իր հետ,—Եւրեյան սիրում է նրան: Պատե-
վելուց յետոյ Անդրէյ նկատում է իր զինին խա-
ղացած խաղը և դադան է դառնում, բայց շու-
տով խեղճ է դալիս և յայտնում է կնոջը, թէ նրան
բոլորովին աղատութիւն է տալիս, նա կարող է
թողնել իրան, դնալ արտասահման, մի խօսքով
անել ինչ որ կամենում է Բայց Եւրեյան առաջ-
վանդ է: Ալեքսինը թէ է անբարոյականացել և
նրա միջոցը, բայց սիրտը դուռ ոչ: Եւրեյան սկը-
սում է մտածել իր դրութեան, իր խաղացած դե-
րի վրա, և հասկանում է, որ այդ դերը շատ էլ
նախանձելի չէ, մի և նոյն ժամանակ նա աւելի
մօտ է ճանաչում Անդրէյին և փոքր առ փոքր
սկսում է պատուել և յարգել նրան, իսկ սէրը
յարգանքից հեռու չէ: Ալեքսին այստեղ էլ դեր է
կատարում, բայց բացասական: Եւրեյան հիա-
ստեղծութիւն է և ընկնում է ամուսնու գիրկը ինչ-
պէս տեսնում էք, ամբողջ գործողութիւնը կատար-
վում է Եւրեյայի և Անդրէյի շուրջը և այդ դերերի
կատարողները՝ տ. Սալինա և պ. Լեւսկի, ամ-
բողջ ժամանակ իրանց վրա էին կենտրոնացրել
հատարակութեան ուշադրութիւնը իրանց հիանալի
խաղով: Տ. Սալինա և պ. Լեւսկին հաւատար
կերպով հասկացել էին իրանց միմեանց հակա-
ռակ դերերը: Տ. Սալինա պարզ, ճիշդ կերպով
ներկայացնում էր կիսով չափ անբարոյականացած

օրիորդին, որ կամաց կամաց հասկանում է իր
սխալ դրութիւնը. նրա խաղի մէջ նկատվում էր
խոր հակադրութիւն: Արհամարհանք, ուրախու-
թիւն, հիասթափութիւն, տրտմութիւն, զղջում
նրա խաղի մէջ: Մի կատարեալ chef d'œuvre
պէտք է համարել վերջին տեսարանը, երբ նա
դիմում է դէպի ամուսնու գիրկը, այդ ժամանակ
նրա երեսի վրա զղջման մի այնպիսի արտայայ-
տութիւն է տեսնում, որ մարդ ապշում է տեսնե-
լով թէ ինչպէս միմիկան հպատակվում է դերա-
սանուհու կամքին: Պ. Լեւսկի, որի մասին մենք
մինչև այժմ ասելիք չենք ունեցել խօսելու, ա-
ռաջանկարող տեղ է ընտրում խմբի մէջ: Նա ունի
բնական գեղեցիկ կազմուածք, լաւ դիկցիա, մի-
միկա, ընդունակութիւն այնպիսի զորմ չլինել, որ
դժուար է հաւատալ, թէ այդ այն դերասանն է,
որին մի օր առաջ ուրիշ դերում էք տեսել: Պա-
րոնք Բելուգինի դերում, ինչպէս և միշտ, լաւ
էր:

Nemo

ՆԱՄԱԿ ՄԵԾ-ՎԱՐԱՔԻՆՍԱՑԻՑ

Մայիսի 16-ին

Ընդհանրապէս վերջացած ամեն գիւղ կամ մեր-
ձակայ գիւղերի միասին ունենում են տեղական
ուխտատեղիներ, որոնք շատ անգամ և ոչ մի
սուրբի անուն չեն կրում, բայց ժողովրդի աչքում
աւելի հրաշագործ են, քան յայտնի նշանաւոր
ուխտատեղիները:

Մի կողմ թողնելով կրօնական դարերի ստեղ-
ծագործած այդ սրբավայրերի կրօնական նշանա-
կութիւնը և այն գերբնական զօրութիւնը, որ ըն-
ծայում է դրանց ժողովրդի վրա երևակայութիւ-
նը, կը կամենայինք երկու խօսք անել թէ ինչ
նպատակով է ծառայում այդ ուխտատեղիների
արդիւնքը: Խնայելու ոչ ոքի հետաքրքրութիւն
չեն շարժում այդ փոքրիկ առուակները, որոնք
մի տեղ ժողոված կարող էին փոքրիկ դեռակներ
կազմել և մի սուրբ նպատակի ծառայել. այն ինչ
անհոգութիւնից անպատկան մէջ կորչում են,
ծառայելով միմիայն տեղական քահանային շա-
հերին, որոնք ծառայութիւնը այն տեղին է համարում,
որ նուրբած մտքերն անգամ նպատակաւորմար են
համարում աւելի գոմերում վառել, քան Աստուծոյ
տաճարում: Մենք ունենք երեք ուխտատեղիներ.
մէկը զոյգանից «Ս. Կիրակի», գտնվում է անտա-
ռախտ ձորակում, որի միջից կարկաչահոս արծա-
թափայլ գետակը անցնելով կենդանութիւն է ներ-
շնչում յընկալ ծառամէջ կանաչադարձ վայրե-
րին և երկնիքում ծաղիկներին անուշահոտ բուր-
մոնքով: Կրօնական առանց այն էլ մաքուր օդը,
մաքուր ակամայ հիանում է առաջին անգամ
հանդիպելով ընտելեան այդ հրաշալի ստեղծա-
գործութիւններին: Գետակը՝ դա մեր սրբազան
փոքրիկ Գանգեսն է, որի բարիքներից աւելի գե-
ղեցիկ սեռը դիտել օգտվել, առանց համեստու-
թեան դէմ մողանալու, միմաւոր և ոտուկախիտ
վայրերում... ուր փոքրիկ ջրնիկներն են կազմ-
վում: Խոլը մնալ սրբանշին ընտելեան ծախին
անհնար է. և ասա ուխտատեղիների բաւական բազ-
մութիւն Զատիկից սկսած մինչև խոր աշուն ամե-
նայն կիրակի մաքնիսական զօրութեամբ, քա-
շում է դէպի ինքը—այդ սրբավայրը, որի կատա-
ղի սիրահարը աւելի փափկատուն սեռն է. հաս-
կանալի է թէ ինչ բարեբար ազդեցութիւն կարող
են գործել ընտելեան հրաշալիքներով զարդարված
վայրերը, փակված, անշարժութեան զանազան
ված կեանքի վրա: Այդտեղ տեղի էին ունենում
այն այլանշան, անբարոյական պատկերները, ո-
րոնք սովորական են մեծ ուխտատեղիներում:
Խաղաղ ընտելեան ծոցում, վաղորդեան ցողով
պարարտացած դալար խոտի վրա, ստուգաբան
ծառի տակ, կարկաչահոս գետակի ափում, հա-
մատ ճաշ, մեծ մասամբ առանց ոգիւնց ըմպելիք-
ների, (պատիւ դարձալուսնու, որ խմել չը գիտէ,
կամ չափաւոր, բացառութիւններ շատ քիչ), որ-
քան հրապարակ է, որքան քաղցրութիւնների հետ

կապված է. աւելացրէք այս ամենի վրա հովա-
սուն մեղմիկ դեփիւտը, որ մեռած մարդուն ան-
գամ կեանք է ներշնչում, բազմազան թուշոնների
քաղցրահնչուն երգն ու պարը, այն ժամանակ
հասկանալի կը լինի գեղածիծաղ ընտելեան գե-
ղեցիկ խաղը: Ահա թէ ինչպէս ու Կիրակին այն-
չափ կախարդում է մեր սրտերը և այնչափ հոգե-
կան ճնարիտ զուարճութիւն պատճառում: Բայց
հար է գնում արդեօք այդ ուխտատեղիի արդիւն-
քը, որ այնպէս փոքր չէ, ինչպէս կարծւում է.
շատ անգամ ակնառես ենք եղել, ուշադրու-
թեամբ դիտել ենք բաւական թուով մատաղներ
են մորթվում, մանաւանդ մի քանի յայտնի կիրա-
կիներում, առատ մօտ, խաչահամարը է ժողով-
վում: Իսկ այդ ամենի լիակատար, ինքնիշխան
տէրը մի ճարտիկ քահանայ է տառնեալ տարինե-
րից ի վեր, որ խորամանկութեամբ ամենայն ինչ
ծածկել գիտէ: Այդպէս անհնար կորչում են և
միւս ուխտատեղիների (ս. Կատակատար, ս.
Սարգիս) արդիւնքը, այն ինչ կարծում ենք
փոքր ծառայութիւն չէին անի մեր դպրոցներին.
կօպէկի համար հարկւր դուռ ենք ծեծում,
հազար անգամ կարմրում ենք... (մոռանալ
չենք կարող որ մի բարձր կրթութեան տէր
մարդ, արհամարհանքով վերադարձել էր յօգուտ
դպրոցի ներկայացման տոմարը), բայց հար կեր-
թայ եթէ դժուարութիւններից խոյս տանք. ա-
ռանց նեղութեան ոչինչ բարիք չէ կարելի առա-
ջանցել: Հոգաբարձութեան ուղղակի պարտակա-
նութիւնն է հոգալ այդ մասին. միջոցներ, բաղ-
խել մինչև որ կը բանան: Տեղական գործակալը
վաղուց արդէն հրաւիրել է հոգևոր իշխանութեան
ուշադրութիւնը այդ ուխտատեղիների արդեանց
վրա, մեր դպրոցների շահը պահանջում է օր
առաջ վճել այս հարցը. կասկած չունենք որ
հոգևոր իշխանութեան սրտին ևս մօտ պէտք է
լինի այս խնդիրը:

Ղարաբլինցի

ՆԱՄԱԿ ԲԱՎՈՒՆՑ

Մայիսի 17-ին

Մարդասիրական ընկերութիւնը անցեալ շաբաթ
քաղաքային դռնային մի խնդիր է ներկայացրել,
որով խնդրում է քաղաքային կենտրոնում գտնվող
ազատ հոգերից տալ իրան մի յարմար կտոր, որ-
տեղ կարելի լինէր շինութիւն կառուցանել՝ այդ-
ված ուսումնարանի շինութեան փոխարէն: Այդ
խնդիրը ամսիս 12-ին քննարկեալ քաղաքային դու-
մայում, և վճռվեցաւ յատկացնել քաղաքապետ-
ի տան մօտ գտնվող հրապարակը, որի մեծու-
թիւնը համարում է 821 քառակուսի սաժէնի: Ըն-
կերութիւնը ստանալով այս ուրախալի լուրը,
իսկոյն ձեռնամուկ եղաւ մի քանի հարկաւոր
կարգադրութիւններ անելուն, արդէն յանձնված է
քաղաքային ճարտարապետին կազմել շինութեան
յատկագիծը: Երկը յետոյ անմիջապէս կը սկսվի
շինութիւնը: Շինութիւնը կը լինի ուսումնարա-
նական-առողջապահական այժման պահանջնե-
րին համեմատ: Շինութեան համար ստորագրվել
են 20,000 ռ., որոնցից ստացված են դեռ մի
քանի հազար, մնացածը ապառիկ է,—այդ ա-
պառիկները շինութիւնը սկսվելուց յետոյ անմի-
ջապէս կը վճարեն: Վճռված է նախկին շինու-
թեան տեղի մի մասը պարտեզ դարձնել իսկ
միւս մասում ընթացական դպրոցի դիմաց կառու-
ցանել մի երկրաբանի տուն, որի վերի մասը կը
լինի յաջորդաբար, իսկ ներքինը գրատուն և ըն-
թերցարան: Չը մոռանանք յիշել, որ մի 565 քա-
ռակուսի շաժէն տեղ էլ յատկացրած է ապագայ
թուրքաց ուսումնարանին:

Այստեղի տնօրէնաւոր հրապարակը իր փայ-
տեայ շինութիւններով մասամբ նմանվում է մա-
լախի գիւղին: Կառուցված են մօտ 140 փայ-
տեայ և 30 քարեայ խանութներ, որոնցից միայն
տառներորդ մասումն է ծախս լինում, իսկ մնա-
ցածները փայլում են իրանց դատարկութեամբ:
Վաճառականները չեն երևում, թէ ևս լավում է, որ
մի քանիսը եկել են որը ապրանքով և որը ա-

ուանց ապրանքները վերջինների նպատակն է ծախսարժանալ միայն տեղի հետ, և եթէ յարմար կը գտնեն, դալ տարվանց կը սկսեն վաճառականական յարաբերութիւնները: Ներկայ եղողներին շատերից արդէն լսվում են տրտունջներ այն մասին, որ առևտուրը յաջող չէ: Համեմատաբար միայն լաւ են վաճառվում թէյ և քաղցրեղէններ, իսկ Պարսկաստանի և Անգլիոյ տարածքներէ երկրներէ կողմէն, որոնց բերածները գորգեր և ապրէշուտի գործուածներ են, անաղորդելի են յայտնում: Այդ վերջիններից շատ է լսվում բողոք քաղաքային վարչութեան դէմ, թէ ինչու է հրատարակում տոնավաճառի բացման մասին, այն էլ այսքան ուշ, երբ ոչինչ պատրաստութիւն չէ տեսնուելի լաւ կաներ յետաձգէր մի տարի եւս, մինչև որ պատրաստ կը լինէին քարեայ շինութիւնները, քանի որ ոչինչ նշանակութիւն չունեն մեզ համար այս տեսակ անյարմար խանութներ, որոնք ամեն րօպէ կարող են ենթարկուել կրակի, իսկ այժմ անձրևի ժամանակն էլ մեր ապրանքը լողում է ջրի մէջ: Այժմ այդ խեղճները մի քանի հարիւր ուղիք վաճառվելուց յետոյ պիտի ուղևորվին Մակաբա: Այս հանգամանքին պէտք է վերաբերել այն թէ ինչու շատերը իրանց ապրանքները թողնում են զանազան շոգնակներ և քարաւանսարաններ ամբարներում: Խանութները բաւական թանկ են, քարեայ 100—300 ր., իսկ փայտեայ խանութները 30—60 րուբլի: Վաճառականներից առաւել բախտաւոր է տոնավաճառի հիւրանոցի տէրը, երևի այն պատճառով որ նրա մօտ երգում են արփիանկա կոչված կանայք, որոնք մի տեսակ հրապուրիչ են մեր ասիական ժողովրդի մեծ մասամբ բիրտ ճաշակի համար: Կան նմանապէս հասարակ պանօրամա, և ուրիշ երկրորդական և մեծ մասամբ անպէտք զուարճութեան տեղեր:

Տօնավաճառում, քաղաքային վարչութեան կարգադրութեամբ, ամսին 15-ից սկսած պիտի ամենայն օր երեկոյեան ժամը 5—7 ամի ղինուորական երաժշտութիւնը: Նոյն վարչութեան կարգադրութեամբ ամենայն օր տօնավաճառի հրապարակը ջրվում է:

2.

ՆԵՐՔԻՆԻ ԼՈՒՐԵՐ

Երբեմն մեզ գրում են: «Մի կանոնաւոր հասարակական գրադարանի պահանջը այստեղ անպայման զգալի է դարձել: Մինչդեռ մի կողմից մեծանում է կարգաւ ցանկացողների կոնսերվացիոն, միւս կողմից մեր քաղաքը իր մոտակայ կենտրոնի մեծ է նախկին պարսկական Ներքին: Գուցէ ոչինչ այնքան դժուար չէ այստեղ փողը ի շատէն ընթերցասէր մարդու համար, որքան զրեք ձեռք բերելը: Հասարակական մատչելի գրադարան չը կայ, իսկ կրթիչ գրադարանը միայն անդամների համար է վերապահված: Եթէ չկը՝ սխալվում, երևանում գրադարանի հիմնելու հարցը մի քանի անգամ արդէն յարուցված է եղել: Վատ չէր լինի, եթէ տեղական երկրասարդութիւնը լրջօրէն մտածէր և ձեռնարկէր մի այնպիսի հասարակական գրադարան—ընթերցարանի հիմնարկութեանը, որտեղից ամենքը կարողանային օգտվել:»

Պարսկաստանի ԱՊԻԱՐԻՒ քաղաքից մեզ գրում են հետևեալը. «Պարսկահայերի անուսական և մասաւոր խնդիրներին նուրբ մի ամապիլի հրատարակելու հարցը, ինչպէս լսվում է, Թաւրիզում արդէն հարկաւոր ուղարկութիւն է գրաւել տեղական հայ երկրասարդութեան և ս. առաջնորդի կողմից: Ձեր լրագրի մէջ արդէն շատ անգամ խօսք է եղել այդ մասին, թէ պարսկահայերին անհրաժեշտ է ունենալ իրանց կենսական հարցերը հետազոտող մի սեփական օրգան, որի հաստատելը այժմ շատ կարևոր է, և յարմար, քանի որ Թաւրիզում մի տպարան հիմնելու հարցն էլ հերթական հարց է դարձել Միլիթարեան սրբաշանի շնորհով: Եթէ Պարսկահայաստանում մի կենտրոնական վարժապետանոց հիմնելը առ. այժմ դուցէ դուրս չի գայ, դրա հակառակ նոյն իսկ Թաւրիզում հնչողութեամբ կարելի է հիմնել մի ամապիլի և մի տպարան, որի համար գլխաւորապէս հարկաւոր է եւսանդ և կամը, քան թէ մեծ գումար և կողմնակի աջակցութիւն:»

Մահմետական հոգևորականութիւնը մտադրութիւն ունի Պետերբուրգում մի մէկիմ կառուցանելու, և այդ նպատակի համար վաղուց արդէն փող է հաւաքվում: Բայց որովհետև հաւաքված

փողերը, ինչպէս հաղորդում են Պետերբուրգի լրագրիները, բաւական չեն մի չքեղ շինութիւն կառուցանելու համար, ուստի մահմետական հոգևորականութիւնը վճռել է դիմել ամբողջ Ռուսաստանի մահմետականներին՝ և խնդրել կամաւոր նուիրատուութիւն:

Մայիսի 21-ին, նախկին Արծրունու թատրոնում պ. Տէր-Ղալիթեան զերաւանական խմբի մահմետականներին տուեց մի ներկայացում Աւելորդ է. ասել, որ պ. Տէր-Ղալիթեան իր կոմիդիով լի խաղով մեծ զուարճութիւն պատճառեց թատրոնի ոչ-փողերաթիւ հասարակութեանը: Բայց դրա հակառակ անհաճոյ տպաւորութիւն թողեցին թէ անբովանդակ վողբիչները և թէ անտարկտիկութիւնը երգող երգիչները՝ իրանց աննիւղաշնակ և անմիտ երգերով: Չէ կարելի չը նկատել և այն, որ ներկայացումը, որ պէտք է սկսվէր ժամը 8-ին, սկսվեցաւ համարեա 9 1/2-ին:

Թիֆլիսի նահանգական վարչութեան բժշկական բաժանմունքից «Кавказ» լրագրին առած տեղեկութիւններից երևում է, որ 1886 թ. ընթացքում Թիֆլիսում մեռել են 2435 հոգի: Դրանցից 224 հոգի մեռել են տարախոխիկ հիւանդութեամբ: 1885 թ. ընթացքում Թիֆլիսում մեռողների թիւն էր 2541: Իսկ 1883 թ. ընթացքում Թիֆլիսում մեռածների թիւն էր 3,002: Պէտք է նկատել, որ մեռողների թիւն այդ պիտի զգալի պակասել, ինչպէս որ այդ երեւում է 1883 թ. և 1886 մեռածների համեմատութիւնից, աւելի հետեւեալ է տարախոխիկ հիւանդութիւնների նուազելուն, քան թէ ընդհանրապէս քաղաքի առողջապահական պայմանների փոփոխութեան, որը այնքան էլ զգալի չէ վերջին երեք տարիների ընթացքում:

Շուտով Պետերբուրգի վրայով Բագու պէտք է գայ ամերիկացի գիտնական խմբի, որի նպատակն է ուսումնասիրել այն հարցը, թէ արդեօք կարող է պատահել, որ մտրիկ աղաղայում Բագուի նաւթահորերը սպառվեն:

Հարաւային Ռուսաստանում ծխախոտի բոյսի վրա երեւցել է մի նոր տեսակ հիւանդութիւն: Այդ հիւանդութեան առաջն առնելու համար, ինչպէս հաղորդում են Պետերբուրգի լրագրիները, պետական կառուածների միջնորդութիւնը ձեռք է առել հարկաւոր միջոցներ:

ՎԵՐԻՆ-ԱՊՈՒԼԻՍԻՑ մեզ գրում են. «Այստեղի ուսումնարանից մի աշակերտ արտաքսելու մասին «Մշակ» մէջ տպված լուրը՝ մի քանի տարածայնութիւնների առաջ բերեց. ուստի հաղորդում եմ ձեզ իրողութեան ձեր պատմութիւնը: Արտաքսված աշակերտը Ներսէսեան իրան շատ վատ է եղել պահում ուսուցիչներից մէկի դասերի ժամանակ, որի պատճառով և մանկավարժական խորհուրդը վճռեց արտաքսել նրան զպրոցից: Դրանից յետոյ կազմվեցաւ հոգաբարձական և ուսուցչական ժողով, որի մէջ հոգաբարձուները այդ հարցը թողեցին ուսուցիչների հայեցողութեանը և կարգադրութեանը: Այդ խառն ժողովից յետոյ կազմվեցաւ ուսուցչական նոր ժողով, որի ժամանակ թէ է սկզբում ուսուցիչներից մի քանիսը՝ զանազան մասնաւոր աղբեղութեան շնորհիւ, տատանվեցան հաստատելու նախկին վճիռը,—բայց ի վերջոյ առաջվայ կարգադրութիւնը հաստատվեցաւ, քանի որ մեծ անպատուութիւն կը լինէր ուսուցչական խմբի համար, եթէ մի քանի օր առաջ կայացած վճիռը այդ օրը քանդվէր: Ժողովի վճիռը դրոշմադրված է: Իսկ այժմ սկսված են տարածայնութիւններ աշակերտի ծնողները և հոգաբարձուների մէջ:»

ԻՊՊԻՐԻՑ մեզ գրում են. «Այստեղի եկեղեցու շինութիւնը աւելի քան ողորմելի դրութեան մէջ է. առատադրել և պատերը ձեղքված են, իսկ եկեղեցու մէջը և մուրթ է և խոնավ: Բաղմաթիւ թրուշուներ անարգել իրանց համար բոցեր են շինել եկեղեցու մէջ, և կեղտոտացնում են առանց այն էլ մաքուր չը պահող եկեղեցին: Պատահել է եկեղեցու մէջ տեսնել և օձեր: Եւ զարմանալին այն է, որ այսպիսի եկեղեցի է պահում այն ժողովուրդը, որ աղքատ չէ, և որը դատաստանական անպէտք գործերի համար տարիներով հազարներ է վաճառում: Եկեղեցին սենյակ մօտ 6 հազար դրամադուր: Անհաւանական դրութեան մէջ է նոյնպէս և խղիւղի ուսումնարանը, որը աւելի

քան 16 տարի է, որ գոյութիւն ունի, որը երբեմն փառաւոր վիճակի մէջ է եղել, բայց այժմ հոգաբարձուների մեծամասնութեան անտարբերութեան շնորհիւ կաղում է, թէ և ունի մի քանի լաւ ուսուցիչներ: Հոգաբարձուներից ուսումնարանի մասին հոգացողը միայն տէր Սամուէլն է. դպրոցը չունի դասդարան, եղած զրեքն էլ արկղեւում փակված են և ոչ ոք դրանցից չէ օգտվում: Ընդհանրապէս ուսումնարանի վարչական մասը շատ վատ դրութեան մէջ է: Խղիւղը մի հասարակ գիւղ չէ. այստեղ կան շատ հասկացող անձինք, ուստի իրաւունք կայ պահանջելու, որ ժողովուրդը իր դպրոցը կանոնաւորուէ մէջ անտարբեր և սառն չը լինի: Շուտով շինութիւնները կը վերջանան, և շատ լաւ կը լինի, եթէ ժողովուրդը պատրաստութիւններ տեսնի, որ դոնէ սեպտեմբերին ամեն բան կարգին լինի:»

Շնորհակալութեամբ ստացանք պ. Աղամբանի «Շէքսպիր և իր Համլետ ողբերգութեան աղբիւրն ու քննադատութիւնները» վերնադրով գիրքը: Գիրքը տպված է Թիֆլիսում, Գու. Մարտի-լոսեանցի տպարանում և արժէ 1 րուբլի: Տեղը և թուղթը շատ լաւ են: Այդ հետաքրքիր գիրքը լսվողական մասին կը խօսենք մի այլ անգամ:

«Մշակ» կէս տարվայ բաժանորդագրութիւնը արդէն սկսված է: Գու. ամսի 1-ից մինչև յունվարի մէկը պէտք է վճարել 6 րուբլի:

ՎԱՂԱՐՇԱՊԱՏԻՑ մեզ գրում են հետևեալը: Շատ անգամ դրսի մարդու համար մի օր և է երեւոյթ աւելի նկատելի է լինում, քան թէ այն մարդկանց, որոնք նոյն երեւոյթը ամեն օր իրանց աչքի առաջ ունեն: Էջմիածին եկող նոր մարդու վրա, լուսաւորականութեան այդ կենտրոնաւայրը իր բոլոր շինութիւններով, անախորժ տպաւորութիւն է անում: Մայր-եկեղեցին քանդվում, աւերվում է, սեղանատունը և վարդապետների խոցերը՝ մուրթ, խոնավ և աւերված են: Սեղանատան մէջ տիրում է սարսափելի խոնավ, անախորժ օդ: Հեմարանը, որը նոր շինութիւն է, արդէն քանդվում է. նրա ամենամեծ դահլիճը այն աստիճան քանդվում է որ արդէն դահլիճի մէջ ոչ ոք չէ մըտնում: Ոչ աշակերտներ, ոչ էլ ուսուցիչներ, որովհետև դահլիճի առատադրը ամեն րօպէ կաւոր է փուլ գալ: Նշմարանները այնպէս են շինված, որ ձմեռ ժամանակ ինչքան էլ տաքացնէք վառարանները՝ եօթ աստիճանից աւելի չէ կարելի հասցնել նշմարանի տաքութիւնը: Ամբողջ էջմիածինը փլատակներ են Մինչև այժմ ամեն բան ինչ որ շինվել, վերանորոգվել է,—կատարվել է անհաստատ կերպով: Այժմ այդ աւերակները նորոգելու համար անապին ներկայանում միջոցներ են հարկաւոր: Հեմարանի ուսուցչական խումբը երկու կուսակցութիւնների վրա է բաժանված, որոնց մէջ տիրում են անընդհատ երկպառակութիւնները: Ամբողջ էջմիածինը ուրիշ բան չէ, եթէ ոչ վիշտակների մի կոյտ:»

Լուսն էր որ Թիֆլիսի խնտիլեցնող հասարակութեան մի յայտնի շրջանում միտք է յղացել մի չքեղ ճաշկերպի տալ ուսու հռչակաւոր դերասանուհի տիկին Սալմեային:

ԱՐՏԱՔԻՆ ՏԵՍՈՒԹԻՆ

ՊԱՆԻՏՈՒԹԵԱՆ ՀԱՐՅԸ ՀԱՅԱՍՏԱՆՈՒՄ

Տեսական-քաղաքական ծանր հանգամանքներ շնորհով շատ տարիներից ի վեր Հայաստանի խորքերից սկսված է պանդուխտների մի հոսանք գէպի զանազան մեծ կենտրոններ: Պանդուխտութեան այդ հարցը նոր չէ. նրա սարսափելի հետեւանքների մասին շատ անգամ առթի է եղել հրապարակաւ խօսելու: Եւ ճշմարիտ, եթէ այսօր, ոչ թէ միայն Թիւրքիայի, այլ և Պարսկաստանի հայ ժողովրդի հան տնտեսական և բարոյական կեանքը, նոյն իսկ նրա զոյգութեան մի քանի մեծ վրտանքներ են սպառնում, դրանցից ամենանշանաւորներից մէկն է պանդուխտութեան հարցը, որը աճելով աճում է: Ահա թէ ինչ են դրում Մուշից այդ խնդրի մասին Պօլսի հայոց լրագրիներին: Պանդուխտութեան հոսանք է սկսվել մեր երկրից, որ տանում է իր հետ հեռու, շատ հեռու

տեղեր: Մուշի երկրասարդական և այրական ոյժերը, և ոչ միայն Մուշի, այլ և Վանի, Բաղէշի, Տիգրանակերտի, Գարբերդի, Բալուայ, Քլիւի, Նրդնկայի, Կարնոյ և այլ հայաբնակ գաւառներից, դատարկեցնելով մեր դաշտերը ու արտերը աշխատաւոր տարբից, գրկելով անհամար կանանց իրանց այրերից, գաւառներ՝ իրանց ծնողներից:

Քանի հազարներ գաւառացիներից տարածված են այսօր Լ. Պօլսի և Զվիւնիայի կողմերը, Բօլդարի, Ռուսիսի, Գուսաստանի կողմերը, Վերապտան, Թիֆլիս և չրքակաքը, և այլ շատ տեղեր, և քանիսն են օրից օր թափվում են այն կողմերը: Ոչ թիւ կայ և ոչ համար. ինչու են գնում, ինչ վիճակի մէջ են, ինչ են անում, կը դառնան թէ աւելի կը հեռանան, դարձեալ հարցնող չը կայ, և ինչու...:

Արդարեւ ունեցել ենք մեծամեծ գաղթականութիւններ, բայց ոչ այսպիսի աղէտակալ և դառն պանդուխտութիւն: Մեր ծերերը պատմում են թէ, երբ 40—50 տարի առաջ մի հայ մարդ՝ Նեղու-թիւնից կամ հր և է պատճառից ստիպեալ՝ ուղիք թողնել իր հայրենիքը, եթէ ունէր սայլ, կը լծէր, կամ իր անասունների վրա բաճաղով իր կայքը և երկաքը, կերթար ուր որ ուզում էր, որովհետև կարելի չէր մի մարդու թողնել իր տունը անտէր. ոչ, այլ հր երթային, ընտանիքը իրանց հետ էր, և այսպէս՝ շատ անգամ կը բառնային ու կերթային դիւղեր, երբեմն ամբողջ գաւառների բնակիչները միասին: Միայն երկու բան չէին կարող տանել—հայրենիքի հողը ու սիրելեաց գերեզմանը: Հազիւ 30—40 տարի է, որ սկսեց պանդուխտութիւնը, և այսօր իր ծայրին է հասել:

Առաջին տարիները, պանդուխտութիւնը երկտասարդների համար կը համարվէր դուռնաք, մինչև որ յանկարծ սկսեց մոլեղեղաբար մեր գտնել աւան դիւղ և խրճիթ: Ամեն գերդաստան կամ տուն ունի այսօր իր պանդուխտը, ամեն մէկն իր չափով 1—2-էն, մինչև 4—5. օրինակի համար Մուշի խաւ-դիւղը՝ հազիւ 250 տուն, ունի 3—400 պանդուխտ, Նորշէնը՝ 200 տուն, ունի 300 պանդուխտ, Բերդակ՝ 120 տուն, ունի 200 պանդուխտ, և այսպէս ուրիշ դիւղեր և աւաններ և քաղաքներ: Բայց ինչ են պանդուխտութեան այս կէտին հասնելու պատճառները: Հիմարտան իմանալու համար պէտք է դիմել պանդուխտին:

Եթէ երբեմն պանդուխտութիւնը կատարվում էր մասնաւոր կերպով, այսօր կատարվում է ընդհանրապէս, և այն իսկ ծնողներ, որոնք մինչև սար ու ձոր էին գնում իրանց գաւառը պանդուխտութիւնից դարձնելու, իրանք են այժմ նրանց առաջնորդող և ճամբու դնող դէպի պանդուխտութեան անդունդը: Գնացողները բոլորը հայ են, այն էլ երկրապարծ դարը, էլ ինչպէս զարգանայ երկրապարծութիւնը. պանդուխտներուն 3/4-ը ամուսնացած անձինք են, էլ ինչպէս կարող է բազմանալ հայ ժողովուրդը՝ միայն մէկ ամսում Մուշի այս տարի պանդուխտներու թիւը կը հաշվի 5—6 հարիւրներ:

Այս աղէտակալ պանդուխտութեան պատճառները շատ են. վերջին տարիներս պանդուխտութեան բազմանալու վրա գլխաւոր աղբեղները մեր աղը համարվում է դաւամական տաքնապը, որի համար ստիպված են երկրապարծները թողնել իրանց մահր և երթալ օտար աշխարհներ փախալ ճարկու: Քանիս իրանց որոշած տեղերը չը հասած ճամապարհին մեռնում են, հրչափ անձինք թաղվում են սև հողերի մէջ, հեռու իրանց սիրելեաց գերեզմաններից, կարօտ հայրենիքի, կարօտ իրանց գաւառից և ծնողաց: Բազմացած են և հնողհետէ բազմանում են այրիների և որբերի թիւն և աղբաբուրդը մարմնացած իր սև երեսը ցոյց է տալիս պանդուխտից դիւղակների և տնակների շուրջը. միթէ երեսի վրա ձգված դժբաղդ կանանց և անինամ, անօթի ու մերկ չարչարող երեխաներու թիւ ու համար կայ: Օր կայ որ չը տեսնես առաջնորդարանների շուրջը կնիկներ և երեխաներ, մէկը իր ամուսնոյն վերադարձը կամ գլխուն ճարն է խնդրում, միւսն իր հօրն է վրտաւում, և հաց ու հանդերձ է ուղարկում ինչ անհաւառ առաջնորդարանները, մէկ երկու կամ հարիւր չեն, որպէս զի զարման անհաւ Յուսահաա գալիս են և յուսահատ վերադառնում են:

Եթէ մեր կողմերը տեղի են ունենում կրօնական զեղծմունք և շատ անգամ կրօնախօսութիւն, միթէ գլխաւոր պատճառը պանդուխտութիւնը չէ: Ինչ անհաւ այն դժբաղդ կանայք, որոնց ամուս-

